



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17 1874
L
L



ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՅ ՄԷՋ

17

Բ-27

ՀՐԱՄԱՆԵՒ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ



ՋԵՐՈՒՍԱԳԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱԳԵԼԱԿԱՆ

ԱԹՈՒՈՅ

Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՅ

1874

317-42

53505-ահ



39246-67

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մ Ե Ր Ա Ջ Գ Ի գրադէաները միաբարբառ կը վկայեն : որ մանկական հասակին յարմար ընթերցանութեան գրքեր խիստ պակաս են մեր մէջ : մանաւանդ իզական սեռին նկատմամբ : Հետեւապէս այս պակասութիւնը լրացանելու և ընթերցասիրութիւնը տարածելու համար՝ կարեւոր է ամեն հասակի և ամեն սեռի պատշաճաւոր ընթերցանութեան տեսարաններու և մասուններու թիւը օր աւուր բաղմնադասկել : միտ դնելով միշտ , որ բարոյական անվերահասակ ընկին : Այս տեսակի պատշաճաւոր ընթերցողաճները, եթէ չենք սխալք , աւելի կը բանան մանկանց և օրիորդաց մտքը և կ'աղնուցնեն սիրտը


քան թէ դպրոցական դասերը , ու
րանք դժբաղդաբար շատ տեղ տա-
կաւին ընկ մեքենայականութեան և
ատամնասերտութեան մէջ կը կայա-
նան , քան թէ մտքի և սրտի մշա-
կութեան :

Ահա ներկայ փոքրիկ տետրակը ,
որ քաղտրիս Գայիանեանց Վարժա-
րանի աշակերտուհեաց դպրոցական
հանգէններու մէջ ներկայացուցած
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԻՅԻՔԸ կը պարունա-
կէ , արժան կը համարինք տպագրել
Նրկրորդ անգամ և իրրեւ ընթեր-
ցասիրութեան դոյզն նախադատուղ
նուիրել բոլոր Հայ օրիորդներուն ,
խոտանալով հետզհետէ աւելի հա-
սուն սրտուղներ ընծայադերելու , և
թէ սարագաները մեղ ներեն :



ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՅ ՄԻՉ



Փաստանշխմ. Գիտէք դուք, սիրելի բոլորեր, որ այսօր տօն է. դասատուք չը պիտի գան ուսումնարան. Ա՛րժուհին ալ երեկոցեան պատուիրեց, որ սոյն օրը անօգուտ չանցընենք տուներու մէջ, այլ դասարան ժողովներ, գիրք կարգանք, իրարու բան հարցնենք և գեղեցիկ խօսակցութեամբ տօնը սլքաակենք :

Զարո-կի. — Բայց ի՞նչ գի-
տենք, որ ինչ խօսինք. աւե-
լի լաւ է որ սպասենք մին-
չեւ Վարժուհին դոյ բան
մը պատմէ, մենք ալ լսենք :

Խոսողը դո-խոս. — Օհ, դուն
ալ միշտ կուլաս, Զարուհի,
ամենէն շատ կը կարգաս,
ամենէն լաւ դաս կ'ըսես
և միշտ կը գանգատիս, որ
բան մը չը գիտես : Ի հար-
կէ, ինչ որ գիտենք՝ անոր
վրայ խօսելու ենք, փիլիսո-
փայու թիւն չըսլիտի ընենք,
որ այդչափ կը դժուարացը-
նես : Բան մ' ալ որ չըգիտ-
նանք, մի թէ չենք կարող
նստիլ Եղիշէի պատմու-
թիւնը կարգալ և իրարու

պատմել, որ խիստ լաւ յար-
մար է, որովհետեւ այսօր
Վարդանանց տօնն է :

Սահականոյ (Գեալի վար-
դանի պատկերը նայելով,
որ դասարանի պատի վրայ
կախուած է). — Վարդան ը-
սիր, բան մը միտքս եկաւ,
որ շատ անգամ կ'ամեցած
եմ հարցնել, բայց չեմ
վստահացեր. — Ինչո՞ւ Վար-
դանի պատկերին քով իր
առաքինի ամուսնոյն կամ
մէկ ուրիշ նախնի Հայ կնոջ
պատկեր մ' ալ չը կոյ, որ
իմանայինք թէ այն ժամա-
նակի Հայ կանայք ի՞նչ կեր-
պարանք ունէին և ի՞նչ կը
հագնէին : Ահա՛ Վարդանին

կրնայինք, որ քաջ դիւցաւ
 զուն մ' է, (ամենքն աչ
 կը նային Վարդանի սրաւ
 կերին,) ցրցունազարդ սա
 զաւարդը գլխին, սրողովա
 տիկ սուրը մէջքը և նա
 խորարանչան դաստակալը
 ձեռքին : Վառվառն աչ
 քերն ու վսեմախոհ գէմքն
 ալ կը ցուցնեն, որ խոր
 հելու մէջ մեծիմաստ է և
 գործերու մէջ եռանդոտ :
 Մեր գպրոցը օրիորդաց
 գպրոց է, և ահա դիւցաւ
 զունի սրտակեր մը կախ
 ուած է : բայց ինչքան սրը
 տառուչ կ'ըլար, եթէ Հայ
 դիւցադնուհւոյ մը, կամ
 զաւակասէր մօր մը սրտա

կերն ալ դանուէր հոն, որ
 ամեն օր դիտէինք : Իրաւ
 կ'ըսեմ, ես Վարդանը շատ
 կը սիրեմ և անոր անմահ
 յիշատակը 'ի բոլոր սրտէ
 կը սրատուեմ : բայց գիտեմ
 որ ես աղջիկ մ' եմ, Վար
 դան չեմ կարող ըլլար, սա
 կայն եթէ հայուհւոյ մը
 բուն հայեցի ձեւն ու հա
 գուստը տեսնէի, կ'ուզէի
 անոր նմանիլ : Շատ անգամ
 կը մտածեմ և չեմ կրնար
 ճիշտ սրտակերայնել մտքիս
 մէջ թէ ինչ է Հայ կինը :

Փառանկէմ. — Տեսայք ահա,
 թէ ինչ պէս խօսքը խօսք
 կը բանայ : Ասկից աւելի
 ինչ կարեւոր խօսակցու

Թիւն կ'ուղէք : Սահակա-
նայը մտածեր է Հայ կնոջ
մասին և իր բաղձանքը չէ
կարողացեր դո՛ւ ընել :
Արդեօք չէ՞նք կրնար մենք
այս բանի վրայ խօսիլ, որ
կարելի է օգուտ մ' ալ
քաղենք :

Զարուհի . — Խօսիլ կարող
ենք, բայց պարտալ խօսելն
ի՛նչ օգուտ կ'ընէ, քանի
որ այդ մասին օրինաւոր
բան մը չը գիտենք: Ես դար-
ձեալ կ'ըսեմ. աւելի լաւ է,
որ ամենքս մեր գիրքը առ-
նենք, հանդիսա նստինք և
կարդանք, քան թէ շատա-
խօսու-թիւն ընենք, որուն
համար Վարժուհին ալ

դուցէ՛ դայ տեսնէ և սրբա-
մտի :

Արուսեակ . — Աստուած
սիրես, Զարուհի, այդ սուտ
համեստութիւնդ թող և
մեր խօսակցութեանը ար-
գելք մի լինիր : Վարժու-
հին օրինաւոր բանի վրայ
խօսելու համար ինչո՞ւ պի-
տի նեղանայ : Զէ՞ որ նորա
նեղութիւնը եւ դպուշու-
թիւնը ունայն և անշահ
խօսքերու համար է : Եթէ
այժմէն գեղեցիկ մտած-
մունքներու և խօսակցու-
թեան չը վարժինք, չէ՞ որ
վերջը մենք ալ այն կանանց
նման կ'ըլլանք, որոնք բամ-
բասանքէն աւելի ուրիշ

բան չըզխտեն, և շատ ան-
գամ ալ պարասպուլ թենէն՝
անմեղ տեղը ասոր անոր
վրայ մուր կը քսեն : Եթէ
մենք ալ անանկ ըլլանք, ո՛ւր
կը մնայ ապա մեր ուսմուն-
քը, մեր վրայ եղած խնամ-
քը և յոյսը : Խօսքը լաւ
բացուած է, թող մտա-
ծենք որչափ կարող ենք՝
թէ ի՞նչ է Հայ կինը :

Սաբիիկի . — Ահա՛ քեզ նոր
փիլիսոփայութիւն : Հայ կի-
նը ի՞նչ պիտի ըլլայ : Հայ կի-
նը Նոյի ժամանակէն ՚ի վեր
Հայ կին է . նոր արարած մը
չէ, որ անոր ինչ ըլլալը նոր
քննենք և իմանանք :

Տիգրանուհի . — Սաթինիկն

ալ Զարուհիի գաղափարէն
է, աւելի կատակելու փա-
փաք ունի, քան թէ մը-
տածելու և խօսելու : Սա-
թինիկի համար ալ Հայ կը-
նոջ վրայ խօսիլը արժէք
չունի : Այդպէս ըրած են,
որ աշխարհի ներկայ պատ-
մութեան մէջ շատ ու քիչ
Հայ մարդու անուն կայ,
բայց Հայ կնոջ անուն ամե-
նեւին չը կայ : Այդպէս ը-
րած են, որ այսօր Հայ կա-
նայք իրենք ալ չը գիտեն
թէ ի՞նչ են . վասն զի ամեն
երկիրներու մէջ իրենց սեպ-
հականութիւնը կորուսած
ուրիշ աղգերու կանանց
հետեւած են :

Նոսր . — Երանի թէ
լու բաներուն հետեւած
ըլլային: Դժբաղդաբար, ինչ
որ հին աղգերէն առած են,
հերիք չէ . այսօր ալ նոր աղ-
գաց կրթութիւնը թողած
անոնց պճնասիրութիւնը,
չուայլութիւնը եւ ուրիշ
պակասութիւնները առ-
նելու վրայ են: Ի՞նչ խրդ-
ճալի բան է, կարծես թէ
Եւրոպայուց լուսաւորու-
թիւնը մինչեւ մեզ կը հաս-
նի՝ կը մարի և միայն ծուխը
կը մնայ մեզ:

Սահականոյշ . — Ըսածդ Հայ
կանանց նկատմամբ խիստ
ճշմարիտ է: Արդարեւ ես
չատ գիրք չեմ կարդացեր,

բայց հօրմէս լսած եմ, որ
լուսաւոր աղգերու մէջ
հեղինակ կանայք կան. զա-
ւակները դաստիարակող
մայրեր կան . մանաւանդ
Ս. մերիկայի կանանց և աղջ-
կանց մասին լսած եմ, որ
ոչ թէ միայն աղջկանց, այլ
և տղայոց դպրոցներու և
համալսարաններու մէջ ան-
գամ դաստիարակները կա-
նայք են: Ինչո՞ւ, ըսէ . Ո-
րովհետեւ կին դաստիա-
րակները աւելի փափկա-
սիրտ են, համբերող են,
զգայուն են և բան պատ-
մելու և հասկացնելու զմեզ
աւելի յաջողակ են բան թէ
տղամարդ ինչ



կը հարցնեմ. Հայ կանայք այս գեղեցիկ յատկութեց ո՞րն կ'աշխատին ստանալ: Թողունք վարժարաններու ուսուցչութիւնը, գոնէ կ'աշխատին ընտանեաց մէջ իրենց դասակները կրթութիւն չափ դաստիարակութիւն ստանալ: Ասացէք խնդրեմ, որ կատարելութիւնը կ'ուզեն ըստանալ:

Փառանկեմ. — Եւ ոչ մէկը, այլ միայն նորասիրութիւն, այլ միայն աչք խաբելու զարդեր: Երանի թէ իրենց ունեցած քիչ ու շատ կատարելութիւններն ալ չը կորսնցնէին: Կ'ըսեն թէ

այնպիսի Հայեր կան շատ քաղաքներու մէջ, որ իրենց աղջիկները հայերէն խօսիչ չը գիտեն, բայց շատ ստակներ կը մխեն և ուրիշ լեզուներու մէջ կը վարժեցընեն: Այնպիսիներն ալ կան, որ ուտելու հայ չունին, բայց ստիպուած են շատ անգամ քաղցած մընալ և իրենց կանանց եւ աղջկանց նորասիրութեան ամեն հաճոյքը կատարել և նորանոր զարդերով զարդարել: Բայց ի՞նչ օգուտ, սիրամարդն ալ գեղեցիկ փետուրներ ունի, սակայն ոտքերը ածուխի պէս սեւ են: Այսպէս ալ անդաս-

տխարակ և պճնասէր կլինն
 ու աղջիկը : Ինչ որ ընեն,
 դարձեալ իրենց անկրթու-
 թիւնը կամ սեւութիւնը
 կ'երեւի : Մանաւանդ, ինչ
 ամօթ բան է, երբ որ կին
 մը իր ամուսնոյ, և աղջիկ
 մը իր ճնողաց կարողութե-
 նէն վեր զարգարուած է :
 Ինչ խղճալի բան, երբ կին
 մը զարգերու մէջ արժա-
 նաւորութիւն կը փնտռէ :

Խորովիլիոսիս . — Աւելի
 լաւ է ըսել, ինչ տգիտու-
 թիւն. վասն զի ամեն սր-
 կասութիւն տգիտութեան
 հետեւանք է : Այն կինը,
 որ իր զաւակաց դաստիա-
 րակութիւնը թողած՝ զար-

դերու վրայ կը մտածէ, տը-
 գէտ է : Այն կինը, որ նան-
 րասիրութեամբ իր ամուս-
 նոյ սիրտը կը դառնացնէ,
 տգէտ է : Այն օրիորդը,
 որ իր արտաքին սրջրանք-
 ներով կ'ուղէ ամուսնանալ
 և ոչ թէ իր կիրթ զգաց-
 մունքով և վայելուչ վար-
 մունքով, տգէտ է : Այն
 կինը որ խորհիլ ու դատել
 չը գիտէ, այլ միայն խելքը
 աչքերուն մէջն է, տգէտ է :
 Ո՞ր մէկը թուեմ, ընտանե-
 կան խռովութիւն, ամուս-
 նական սառնութիւն, զա-
 ւակաց անխնամութիւն և
 ամեն տեսակ թերութիւն,
 բոլորն ալ տգիտութեան

հետեւանք են : Քանի որ
 Հայ կանայք եւ աղջիկունք
 մտածելու և լաւն ու վատը
 որոշելու չեն վարժած, դար-
 մանալի բան չէ ուրեմն,
 որ շատերուն մէջ ո՛չ թէ
 օտարազգի կանանց առա-
 քինութիւնները, այլ մու-
 լութիւնները ճարակ կը
 գանեն : Երանի թէ Հայ կա-
 նայք նորասէր ըլլալու տեղ՝
 մայրասէր ըլլային թէ՛ ըն-
 տանեկան կենաց մէջ եւ
 թէ՛ հագուստի : Պարզ
 հագնէին և պարզ ապրէին,
 բայց երկուքի մէջ ալ մայր-
 բուծիւն սիրէին : Ես այն-
 պէս գիտեմ, որ մայրասի-
 բուծիւնը շատ թանկագին

բաներէ աւելի թանկա-
 գին է :

Սալիկի . — Նայէ՛, նայէ՛,
 Զարուհի, թէ ուստի՞ սիր-
 սան և ո՞ւր եկան, իբր թէ
 պիտի բացատրէին՝ թէ ի՞նչ
 է Հայ կինը : Հիմա սկսած
 են գիտութեան եւ մայր-
 բուծեան վրայ խօսիլ, որ
 եթէ թողնես, մինչեւ իրի-
 կուն չեն վերջացներ : Ասոնց
 ըրածն ալ նոր տեսակ բա-
 րողութիւն մ' է, Հայ կինը
 բնութան գնել և ուրիշ բա-
 ներու վրայ խօսիլ : Ի հար-
 կէ, անձնատպաստանները
 այսպէս կ'ըլլան : Աւելի լաւ
 չէ՞ր ըլլար առաջուց խոս-
 տովանէին, որ Հայ կնոջ

վրայ խօսիլն իրենց խելքի
բանը չէ :

Նոնի . — Կըներես, Սա-
թինիկ, լաւ քարողիչներն
ալ շատ քարողելով՝ գեղե-
ցիկ խօսելու կը վարժին :
Ամեն բան աշխատութեամբ
և փորձով կ'ըլլայ : Երեւելի
մարդիկ և կանայք իրենց
մօրէն երեւելի չեն ծնիր :
Այսօր այսպէս կը խօսինք .
վաղն ալ, եթէ շարունա-
կենք, կարելի է աւելի կար-
գաւ և գեղեցիկ խօսինք :

Զարոնի . — Ասանք միա-
քերը դրած են ամեն օր
շատախօսութի ընել : Յա-
ռաջ բան ուսանիլն վար-
գասցետ որ կ'ըսեն, ճիշտ

ասոնք են : Դեռ բան մը
չը սովորած՝ ուսուցանելու
ելած են : Ա՛յ քեզ թե-
թեւամտութիւն : Աստ-
ուած բարի վայելումն տայ
ձեր նոր աստիճանին . Բան
չունիք խօսեցէք : Բայց ի-
մացէք որ Հայ կնոջ վրայ
սլիտի խօսէիք և հիմա խօսք
գտնելու համար սար ու ձոր
ընկած էք : Հայաստանէն
Ամերիկա հասաք : Զգոյշ
կացէք, որ ծովերու մէջ
չընկղմիք : Բայց ի՛նչ, ձեր
ճանապարհորդութիւնն ալ
նորօրինակ բան մ' է, հե-
րագրէն ալ արագահաս է,
որովհետեւ խօսքով, կամ,
աւելի լաւ է ըսել, օգային

Ճանապարհորդութիւն մի
է : Ի՞նչ երկիր կ'ուղէք՝
Թափառեցէք, անոնց կա-
նայքն ալ յիշեցէք՝ եթէ
բան չունիք, սակայն իմա-
ցէք՝ որ Հայ կնոջ վրայ խօ-
սելէն հեռացաք. վասն զի,
այս մասին օրինաւոր խօ-
սելը ձեր խելքի բանը չէ :

Փաստեմք. — Շատ խրա-
տութեամբ կը դատես մեր
փափաքը, Չարուհի, և կ'ու-
ղես զայրացնել, որ կամ
ամենեւին չը խօսինք և կամ
օրինաւոր խօսակցութիւնը
փոխենք սիրտ վերաւորող
բանակառուի : Բայց մենք
չենք զայրանար, պատճա-
ռն որ, գուցէ մեր խօս-

քերն անկատար ըլլան, սա-
կայն մեր փափաքը բարի է :
Ուրեմն, մեր խօսակցու-
թիւնն ալ սլիտի շարունա-
կենք, վասն զի համադրւած
ենք, որ եթէ օգուտ չըս-
տանանք, վրաս երբէք չենք
ստանար :

Ստիկի. — Հսպա ժամա-
նակի կորուստը : Երեւի թէ
ձեզ համար ժամանակը
պարտապ անցնելը ամենեւին
նշանակութիւն չունի :

Տիգրանուհի. — Իբր թէ
ժամերդ և վայրկեաններդ
բոլորը հաշուած՝ անոր հա-
մեմատ կ'աշխատիս : Իբր
թէ չենք տեսած, որ շատ
անգամ դրբիդ կը նայիս,

բայց խելքդ ուրիշ տեղ է :
 Իբր թէ չենք տեսած , որ
 շատ անգամ սուտ պար-
 կեշտութեամբ երկար ժա-
 մանակ լուռ կը մնաս , բայց
 հազարէն մի անգամ եթէ
 բերանդ բանաս , ընկերակ-
 ցիդ սիրտը կը խոցոտես :
 Իբր թէ օրինաւոր խօսակ-
 ցութիւնը՝ ժամանակի կո-
 րուստ է եւ ժամանակի
 գիւտը միայն գրքին նա-
 յելն է , ոչ թէ կարդալու
 համար , այլ ուրիշները
 խաբելու : Աստուած սի-
 րես , մի խափաներ , թո՛ղ
 խօսի Փառանձեմը , որ մենք
 ալ լսենք :

Սահականոյշ . — Այո՛ , կը

լսենք Փառանձեմ , խօսիր
 Հայ կանանց վրայ : Բայց չը
 գիտեմ՝ հին ժամանակի ,
 թէ այժմեան Հայ կանանց
 վրայ պիտի խօսիս : Որով-
 հետեւ , ես կարծեմ՝ թէ
 երկուքի մէջ տարբերու-
 թիւն շատ կայ :

Փառանջեմ . — Այժմեան
 ժամանակի Հայ կանանց
 վրայ ի՞նչ պիտի խօսիմ , և
 մանաւանդ թէ ի՞նչպէս
 կրնամ խօսիլ , երբ մեր
 խեղճ ազգը զանազան եր-
 կիրներու և ազգերու մէջ
 ցրուած ըլլալով՝ կանայքն
 ալ շատ տեղ հայութեան
 անունը միայն պահած են :
 Լեզուն օտարի , հագուստն

օտարի, սովորութիւնն օտարի . . . և այլն և այլն : Այսօրուան օրս եթէ ամեն երկրէ մէկ մէկ Հայ կին ժողովես, պարզ կը տեսնես, որ ամենքն ալ իրարմէ կերպ կերպ տարբերութիւններ ունին : Աւրեմն թողնենք այժմեան կիները և հիներու վրայ խօսինք : Արդարև հնութիւնը մեզմէ դարերով հեռի է և ներկայն աւելի մօտ, բայց Հայու հընութեան մէջ քաղցրութիւններ աւելի կան, քան թէ ներկայի մէջ :

Խոսքովըրո-խոսք.— Բայց հընութեան վրայ ի՞նչ պիտի խօսիս : Մեր ազգի շրս

հաղար տարուան պատմութիւնը եթէ օրերով թղթատես, հազիւ թէ քառասուն կամ յիսուն կնոջ անուն կը գտնես, և այն ալ կամ Թագուհի են կամ Մարտիրոսուհի : Անոնցմով ի՞նչ կրնաս իմանալ, թէ հին Հայու կանայքը ի՞նչպէս էին և ինչ էր հասարակ կարգի կանանց կենցաղն ու կրթութիւնը :

Սահականոյշ. — Իրաւունք ունիս, Խոսքովըրո-խոսք, հընութեան մէջ կիներու վերայ շատ խօսուած չէ, և եթէ պատմութեան մէջ տեղ տեղ կանանց յիշա-

տակութիւն կայ, այն ալ
 Քրիստոնէութեան տա-
 րածմանէն յետոյ է: Որով
 հետեւ, ես լրած եմ որ
 հեթանոսութեան ժամա-
 նակ կինը անարգական բան
 մը սեպուած էր և ստրուկ,
 ինչպէս այժմ շատ տեղ,
 և Քրիստոնէութիւնը մի-
 այն կանանց արժանաւո-
 րութիւնը հաստատեց: Քրիստոնէութիւնը միայն
 հաստատեց, որ մարդկու-
 թիւնը այն ժամանակ կա-
 տարելութեան մէջ կ'ըլլայ,
 երբ ոչ թէ միայն տղամար-
 դիկ, այլ և կանայք ճշմա-
 րիտ լուսով լուսաւորուած
 ըլլան: Վասն զի, կանայքը

մարդկութեան կէսն են,
 և անհնար է որ մէկ կէսը
 յաւաջադիմէ, քանի որ
 միւս կէսը տգիտութեան
 մատնուած է: Փառանձեմն
 ալ եթէ խօսի, ես այնպէս
 կը կարծեմ, որ Քրիստոնէ-
 ութեան ժամանակի Հայ
 կանանց վըայ պիտի խօսի:

Սաբիւնի . — Քրիստոնէութե-
 թէ ժամանակէն քանի՞ Հայ
 կնոջ անուն կարող է տալ:
 Փառանջեմ . — Շատ անուն-
 ներ տալու կարօտութիւն
 չունինք, բաւական է միայն
 որ անոնց գործքերը յի-
 շենք: Վասն զի, մեղ հա-
 մար գործքը անունէն ա-
 ւելի հարկաւոր է:

Զարուհի . (Սաթիւնիկին
նայելով) - Անպատճառ ե-
ղիշէի պատմութեան մէջ
խօսելու բան մը գտած է :
Քանի որ է , որ եղիշէն ձեռ-
քէն չը թողուր : Հո՛ւ , եթէ
օրինաւոր բան մը գտած է
Հայ կնոջ համար , ըսելը
չունինք : Բայց ես գիտեմ
որ Հայ կանանց վրայ խօսիլը
իր կարողութենէն վեր է :

Փառանկի՛մ . - Այո՛ , այո՛ ,
եղիշէէն պիտի պատմեմ
և յուսով եմ , որ դուք ալ
ձեր հակառակախօսութիւլը
մի կողմը պիտի դնէք :

Նո՛նէ . - Պատմէ , Փա-
ռանձեմ , հակառակախօ-
սութիւնն ալ շատ անգամ

խօսակցութեան մէջ շա-
հաւէտ է , եթէ բողոքողն
կամակորութիւն չէ : Մենք
այնպէս կը հասկնանք , որ
Զարուհիի եւ Սաթիւնիկի
ըրածը՝ աւելի խնդիրը պար-
զելու համար է : Անոնք ալ
կ'ընդունին ինչ որ գեղե-
ցիկ է և օգտակար : Պա-
կասութիւնը միայն իրենց
երկչոտութիւնն է : Անոնք
ըած են թէ խօսիլը անվա-
յել է աղջկանց համար , բայց
չըզխտեն թէ անվայելը վատ
խօսքերն են և սուտ պար-
կեշտութիւնը : Եթէ խօսի-
լը վատ բան ըլլար , Աստ-
ուած լեզու չէր տար կա-
նանց : Ամեն կին կամ աղջիկ

լաւ բան խօսելու համար
միշտ աղատ է և միայն ան-
պարկեշտ և անվայել խօս-
քերն են, որ կնոջ ամեն ջը-
նորհքները կ'ոչնչացնեն :
Խօսիր ուրեմն և պատմէ,
Փռուանձեմ, մենք պատ-
րաստ ենք ուրախութեամբ
լսելու :

Փռուանջեմ. (Եղիշէի պատ-
մութիւնը կ'առնու, ուր տեղ
տեղ նշաններ դրած է, մա-
նաւանդ այն տեղ, ուր յատ-
կապէս Հայ կանանց վրայ
կը խօսի) : — Այս գեղեցիկ
պատմութիւնը ես չքսիտի
բառ առ բառ կարդամ, այլ
պիտի իմաստները ըսեմ աչ-
խարհաբար և պարունակ-

ուած օգտակար հետեւու-
թիւններն ալ յայտնեմ :

Սահականոյշ. — Շուտ ըրէ,
Աստուած սիրես, սիրտս կը
թռթռայ, կ'ուզեմ շուտով
իմանալ թէ ի՞նչ պիտի ըսես
Հայ կանանց համար :

Նոսարդ. — Ամենքդ ալ
ունին դիր եղևք, որ պատ-
մէ ինչ որ պատրաստեր է :

Փռուանջեմ. (Պարզ ձայ-
նով եւ ծանր կերպարան-
քով) . — Երբ Պարսիկները
տարիներով աւերեցին Հա-
յաստանը և շատ նախա-
րարադուն եւ գիւղական
մարդիկ գերի տարան, Հայ
կանայքը ամենեւին չը յու-
սահատեցան և չը թուլա-

ցան, այլ մուսացան իրենց
կանացի տկարութիւնը,
տղամարդկանց պէս արիա-
ցան հաւատոյ պաշտպա-
նութե՛ պատերազմին մէջ,
ամեն մղութեան յաղթե-
ցին, և աստուածային սի-
րով վառուած՝ աղօթքով
երկնքի դռները բացին: Ու-
րեմն, աստուած պաշտու-
թիւնը եւ բարեպաշտու-
թիւնը կանանց առաջին
պարտքն է:

Ա.Ֆ.ն.չ. — Ա.յո՛ւ, այո՛ւ:

Փառանքի՛մ. (Կը շարու-
նակէ). — Ա.յրինները առա-
քինութեան հարսեր դար-
ձան և գերուածներու ու
հեռաւոր աշխարհներու

մէջ կապուածներու կա-
նայքը կամօք կապեցին ի-
րենց մօրմուսուոր ցանկու-
թիւնը և երկար օտարիներ
ամուսիններէն հեռի, ող-
ջախօհութեամբ ասրեցան
և անարատ պահպանեցին
ամուսնական ուխտը: Ու-
րեմն ամուսնական հաւա-
տարմութիւնը՝ կնոջ երկ-
րորդ պարտքն է:

Ա.Ֆ.ն.չ. — Ա.յո՛ւ, այո՛ւ:

Փառանքի՛մ. (Կը շարունա-
կէ). — Հոյ կանայքը Սուրբ
Գիրքը կը կարգային, իրենց
զաւակները բարեպաշտու-
թեան մէջ կը կրթէին եւ
ամեն վիշտ աստուածային
սիրով կը քաղցրացնէին:

Ուրեմն, զաւակները փափուկ հասակէն բարեպաշտութեան մէջ դաստիարակելը, մայրենի լեզուն ուսուցանելը, անոնց սրտին մէջ աստուածսիրութեան և մարդասիրութեան ըզգացմունքները զարգացնելը՝ կանանց երրորդ պարտքն է :

Ա.Քնչը . — Ա յո՛ւ, այո՛ :

Փոփանչի՛ժ . (Կը շարունակէ) . — Հայ կանայքը իրենց մասներով կ'աշխատէին և կը կերակրուէին, իրենց պարզ և չափաւոր կեանքով իւրեանց ընտանեկան կենցաղավարութիւնը կը բաղդրացնէին եւ իրենց

կապուած ամուսիններու համար իրենց ուժիկը կ'ուղարկէին : Ուրեմն, չափաւորութիւնը՝ ընտանեկան կենաց հաստատուն հարըստութիւնն է, տնարարութիւնն ու ձեռագործութիւնը՝ կանանց չորրորդ պարտքը : Ուրեմն, տան հարստութիւնը՝ կիներն է, տան թագուհին՝ կիներն է և օրինաւոր ընտանիքը՝ մի փոքրիկ եւ գեղեցիկ թաւաւորութիւնն է :

Ա.Քնչը . — Ա յո՛ւ, այո՛ :

Նորարդ . — Գուցէ այդ պատճառաւ է, որ Սուրբ Եկեղեցին ալ, պսակի ժամանակ՝ նորափեսայն՝ թա

գաւոր կ'անուանէ, իսկ նո-
րահարսը՝ թագուհի:

Փաստէ՛մ. (Կը շարունա-
կէ). — Հայ կանայքը չը յի-
շեցին իրենց առաջին վա-
յերու թիւները, փափկու-
թիւնը եւ ստացուածքը.
Նախարարաց կանայքն ան-
գամ սկսան ուրախութիւն
գիւղականի կեանք վարել:
Ուրեմն, կինը պէտք է որ
իչսէ փափկասիրութեանը
եւ վայելասիրութեանը.
պէտք չէ որ անձնատուր
ըլլայ վաղանցուկ բաներու,
այլ պիտի այնպիսի կրթը-
ւած սիրտ, միտք և կամք
ունենայ, որ իր ամուսնոյ,
իւր որդւոյ, իր աղբի և մա-

նաւանդ Աստուծոյ սիրոյ
համար կարենայ հարկ ե-
ղած ժամանակը ամեն բան
ուրախութեամբ թողուլ:

Ա.Բ.Կ.Ղ. — Ա. յո՛, այո՛:

Փաստէ՛մ. (Կը շարունա-
կէ). — Հայ կանայքը իրենց
գեղեցիկ և առաքինի կեան-
քով քաղցրացուցին իրենց
կապուած եւ բանտար-
կուած ամուսիններու տա-
ռապանքները, միտքարե-
ցին անոնց սրտերը և ա-
նարատ պահպանեցին Հայ
գերդաստանի և Հայ հայ-
րենեաց անունը: Ուրեմն,
կինը մարդու միտքարու-
թիւնն է, գերդաստանի
սիւնը և հայրենեաց հաւ-

տատու թիւնք : Բայց այս
մեծ արժանաւորութեան
արմատն ալ բարի դաստի-
արակութեան մէջ է : Ինչ
տեղ բարի դաստիարակու-
թիւն չը կայ՝ հոն կենցար-
ժանաւորութիւնը մեռած
է, և ուր մեռած է այս
արժանաւորութիւնը, ի-
մացէք որ մեռած է ամե-
նայն ինչ : Վասն զի աղբի
մը կենդանութիւնը՝ առա-
քինի կանայքը կամ մայ-
րերն են :

Ա. Բեւոր. — Ա. յո՛ւ, այո՛ւ. ու-
րեմն առաքինի Հայ կանայ-
քըն ու մայրերը միայն կը-
նան ըլլալ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆԸ :

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻ - Բնութեամբ :
ՄԱՐԳԱՐԻՏ — Գիւցուկան տղջիկ :
ՆՈՒԱՐԴ — Մեծատու-ն օրիորդ :
ԳԱՏՐԻԿ — Ուր :
ՆԱԶԵՆԻԿ — Պճնասէր :

Համադասար-կի. — Տեսէք,
տեսէք, (ամենքը ցըցուցած
կողմը կը նային) զամբիւղ
ճախող աղջիկ մը կուգայ.
Ինչ պարզ հագուստ, ինչ
ուրախ դէմք :

Մարգարիտ. — Բարեւ ձեզ
օրիորդներ :

Դասրիկ. — Բարի եկիք :
Ա. յդ զամբիւղները քո
հիւսա՞ծն են :

Մարգարիտ . — Այո՛ . ա-
սոնցմէն աւելի դեղեցիկ-
ներն կարող եմ հիւսել :
Ուրիշ շատ ձեռագործներ
ալ ունիմ :

Նազենիկ . — Երանի՛ր քո
համբերութեանդ . ես չեմ
կարող կէս ժամ շարունակ
նստիլ և աշխատիլ : Ծնող-
ներս ալ բնութիւնս իմս
նալով ամենեւին չեն աշ-
խատեցներ զիս . հագուստ-
ներս ալ կամ կտրած կ'առ-
նեն՝ կամ ուրիշին կարել
կուտան :

Նոսարդ . — Հաղա ես ,
եթէ քիչ մը աշխատիմ ,
հոգիս բերանս կը հասնի :
Անցած օր մեր սպասուհին

իր ճնողաց տեսութեան
գացած էր , մինչեւ որ սե-
նեակները մաքրեցի , հազար
անգամ սպասուհին անիւ-
ծեցի , որ տան սպասաւո-
րութիւնը իմ վրայ թողած
էր :

Դասրիկ . — Փնփռ . քեզ , Աս-
տուած , ես ամեն օր կ'աշ-
խատիմ , տան մէջ ամեն
բան կը կատարեմ , մաքրու-
թիւն , լուացք , կար , կե-
րակուր , ամենը ես կը սպա-
րաստեմ , բայց ամենեւին
արտունջ մը չունիմ : Բաց
յայսմանէ , ուրիշներու հա-
մար ալ կար կը կարեմ , իսկ
Նազենիկն և Նուարդն ի-
բենց հագուստներն անգամ՝

պատրաստ կը հագնին, և տան մէջ փոքրիկ սպասաւորութիւն մը ընելնուն համար այսչափ դանգատ կ'ընեն :

Նաղենիկ . — Ծնողքդ հարստութիւն թողած չեն, եղբարքդ ալ կարողութիւն չունին սպասուհի մը վարձելու, 'ի հարկէ ամեն բան դու պիտի ընես : Ատոր յօժարութիւն չեն ըսեր, այլ անձարութիւն, ինչպէս առածն ալ կ'ըսէ թէ, « Անձարն է կերէր բանջարը » :

Իսպրիկ . — Նաղենիկ, հաւատացիր որ իմ աշխատանքս յօժարութեամբ է

և ոչ անձարութեամբ : Իմ մօրս պատուէրը միշտ այս էր թէ՛ մարդու ամենէն մեծ և անկորուստ հարբատութիւնը՝ աշխատաբն է, ինչպէս և կնոջ կամ աղջկան փառքն ու պատիւն ալ տանտիկնութիւնը : Նիւթական հարստութիւնները շատ անգամ վայրկենի մը մէջ կ'անցնին, բայց աշխատանքը հաստատուն հարստութիւն է և աշխատասէրները երբէք անօթի և անկարօտ չեն մնար : Ես յաւիտեան երախտագէտ եմ իմ ծնողացս, որ մանկութենէս աշխատանաց եւ տնտեսութեան

վարժեցուցին: Ուստի կ'ըսեմ որ ըրածս ճարահատութենէ չէ, այլ սովորութենէ: Ինչպէս որ քեզ համար աշխատանքը ձանձրալի է, նոյնպէս ալ ինձ համար պարատորութիւնը:

Համադասարհի. — Ինձ համար ալ նոյնպէս: Թողունք որ ուրախութեամբ մօրս կ'օգնեմ եւ ամեն բան կը կատարեմ. Թողունք որ օրը մէկ ժամէն աւելի կը նստիմ եւ զանազան օգտակար գրքեր կը կարդամ, այլ եւ շատ անգամ հօրս նամակները եւ վաճառակա նութեան թղթերը մաքուր կ'օրինակեմ, եւ այս ամե-

նը ինձ համար մի գեղեցիկ զբօսանք կը համարիմ:

Նոսարդ. — Նազենիկ, այս խեղճերը դեռ աշխարհիս համը չըզխտեն, անոր համար աշխատանքն ալ զբօսանք կը համարեն, մինչդեռ մեր զբօսանքն է ժամերով պտրտիլ, գոնէ շաբաթը մի անգամ պարահանդեսներու մէջ գտնուիլ, նորելուկ զգեստներէ երբէք չըզրկուիլ, ամեն ուրախութիւններ վայելել, եւ այլն եւ այլն:

Նալէնիկ. — Իրաւ կ'ըսեմ, զբօսանքէ զրկուիլը մահ է ինձ համար: Մանկութենէս այսպէս վարժած եմ, հագ-

ուիլ, զարդարուիլ և յարդ-
ուիլ :

Մարգարիտ . — Ձ'ըսես որ
քաղաքներու աղջիկներէն
և կիներէն շատերը մէկ մէկ
չաստուածուհի ըլլալու վը-
րայ են, ու իրենց ծնողնե-
րըն ու ամուսիններն իրենց
կամքին ծառայ և սարուկ
եղած են : Բայց ո՞վ գիտէ
թէ շատ անգամ նոյն իսկ
ծնողները և ամուսինները
չեն պատճառ այս բանին :
Ինչ և իցէ, ես այս տեսակ
պատմութիւններ լսելու սիրա-
չունիմ : Ըսէք ինձ, զամ-
բիւղներս պիտի աւնէք,
թէ ոչ :

Նորարդ . — Ահա քեզ նոր

բան . Մարգարիտի սրտա-
ցաւն ալ իր դամբիւղներն
ու ձեռագործներն են : Աս
ալ կ'ուզէ քանի մը փարայ
վաստրիկի, ո՞վ գիտէ, կամ
հայրն անօթի է կամ մայրն :

Մարգարիտ . — Ներեցէք,
օրիորդներ, իմ հայրն ու
մայրն անօթի չեն, բայց
աշխատանքով փարայ վաս-
տրիկիլեալ ամօթ բան չէ :
Փոխանակ ձեզ ովէս հօր
ստակով հագուելու, աւե-
լի ուրախութիւն է ինձ
համար իմ ձեռաց աշխա-
տանքով իմ պիտոյքս հո-
գալու : Յուսով եմ մինչեւ
անգամ ինձ համար օծիտ
պատրաստելու :

Գաբրիէ . — Երանի՛ թէ
 ձեռքս ստակ ունենայի ,
 Համազասպուհի՛ , առանց
 խօսելու կուտայի , ինչ որ
 պահանջեր ինձմէն այս
 սարղասիրտ գիւղական աղ-
 ջիկը իր զամբիւղներուն և
 ձեռագործներուն համար :

Համազասպուհի . — Իրաւ
 կ'ըսեմ , ես ալ ձեռքս ըս-
 տակ չունիմ , ապա թէ ոչ
 զամբիւղները գնելէն ա-
 ւելի՛ իր սիրան ու աշխա-
 տասիրութիւնը վարձատ-
 րութեան են արժանի :

Նապէիկի . — Ի՞նչ շատ ըզ-
 մայլեցաք այս գիւղականին
 վրայ , ի՞նչ կայ այգքան
 զարմանալու : Մի՛թէ զամ-

բիւղներ չէք տեսած : Եւ-
 րոպայէն հազար անգամ ա-
 ւելի գեղեցիկները կը բե-
 բեն ծախելու : Քանի՛ հաս-
 կ'ուղէք , կարող եմ ձեզ
 ցուցնել , որ ճնողքս ա-
 ռած են ինձ համար :

Գաբրիէ . — Մենք զամբիւղ-
 ներու վրայ չենք զարմա-
 նար , Նազենիկ , և գիտենք
 որ Եւրոպայէն աւելի գե-
 ղեցիկները կը բեբեն , բայց
 մեր սիրտը գրաւողը ա-
 ւելի այս գիւղական աղջկան
 աշխատանքն ու պարզա-
 սրբտութիւնն է : Մենք
 կ'ուրախանանք անոր վրայ ,
 որ մեր աչքով կը տեսնենք .
 որ Եւրոպացու ըրածն Ա-

սիացին ալ կարող է ընել,
 եթէ աշխատի: Կը տեսնենք
 որ աշխատանքն ամեն տեղ
 իր արդիւնքն ունի. ամեն
 բան Եւրոպայէն սպասել
 ամեն բան Եւրոպայէն գը-
 նել, այս ալ խիստ թեթե-
 ւամտութիւն է և մանա-
 ւանդ մեծ յանդիմանութի
 Ասիացւոց ծուլութեան:
 Մարդիկ և կանայք ամեն
 երկիրներու մէջ նոյն են,
 միայն աշխատանքն է որ
 Եւրոպացին Ասիացիէն կ'ս-
 բոյնէ: Միայն ուսմունքն ու
 կրթութիւնն է որով մէկը
 կը գովուի եւ միւսը կը
 սխարսաւուի: Աշխատանք,
 ուսմունք, և ահա ամեն-

քը հաւատար են:

Նոսարդ. — Աստուած սի-
 բէք, քարող մի կարգաք,
 ամեն մարդ իր գործը ա-
 ղէկ գիտէ. որչափ կ'ուզէք
 աշխատեցէք, ձեր ձեռքը
 բռնող չքկայ. բայց ուրիշ
 ներու աղատութեան դէմ
 ալ մի խօսիք:

Համադասարհի. — Իբր թէ
 սլարասպորդութիւնը՝ աղա-
 տութիւն է, իբր թէ աշ-
 խատանքի վրայ խօսիլը՝ ա-
 ղատութեան դէմ խօսիլ է:
 Ի՞նչ թիւր հասկացողու-
 թիւն և ի՞նչ կորստաբեր
 ճանապարհ: Աղատը նա է,
 որ ուրիշի աշխատանքով
 չապրիր: Աղատը նա է, որ

մտաներու և նորելուկնե-
րու գերի դարձաց չէ :
Ազատը նա է , որ հաստա-
տուն կամք ունի բարին ու
օգտակարը գործելու և չու-
րէն ու վնասակարէն հե-
ռանալու : Այսպէս կը
հասկնանք մենք ազատու-
թիւնը :

Իսպրիկ . — Ի՞նչ հարկ է
երկար խօսիլ , Համազաս-
պուհի , քանի որ ըսած-
ներդ միայն դու պիտի լը-
սես : Միթէ կրկարծես թէ
Նազենիին ու Նուարդը
չե՞ն գիտեր , որ աշխատան-
քը պարապորդու թենէ ա-
ղէկ է : Միթէ կը կարծես
որ պիտի համոզուին ըսած-

ներէդ : — Ես չեմ կարծեր ,
վասն զի համոզուելու հա-
մար կամք հարկաւոր է .
քանի որ կամք չը կայ , հե-
տեւապէս համոզուիլն ալ
շատ դժուարին է : Ուրեմն
կ'աղաչեմ որ թողուս այդ
խնդիրը :

Նազենի . — Ինչո՞ւ թողու ,
թող խօսի :

Նուարդ . — Այո՛ թող
խօսի , գուցէ պիտի հա-
մոզուինք :

Համազասպուհի . — Կ'ուզէք
համոզուեցէք , կուզէք մի
համոզուիք : Ես իմ կողմէն
հաստատ համոզուած եմ ,
որ թէ՛ հարուստ եւ թէ՛
աղքատ ամենքն ալ պար-

տաւոր են աշխատիլ : Ես
 համոզուած եմ որ կանանց
 ու աղջկանց մաքրասիրու-
 թիւնը եւ պարզակեցու-
 թիւնը ընտանեկան կենաց
 զարդն է : Ես համոզուած
 եմ, որ տանտիկնութիւնը,
 ասղներգործութիւնը, բա-
 րեպաշտ վարք ու բարքը
 իգական սեռի վայելուչ
 պատկն է : Ես համոզուած
 եմ, վերջապէս, որ օրինա-
 ւոր կրթութիւն մը, հա-
 մետ ու ամօթխած վար-
 մունք մը և աշխատասէր
 ունակութիւն մը՝ աղջկանց
 ամենէն մեծ օժիան է, որով
 կարող են արժանաւոր մայ-
 րեր և տանտիկններ ըլլալ :

Այս է իմ համոզումը, այս
 է իմ կարգացածը :

Մարգարիտ . — Կ'երևի թէ,
 դամբիւղներս չըպիտի առ-
 նէք գուք, հոգ չէ, առնող
 ներ շնտ . Աստուած ան-
 պակաս ընէ Հայոց բարե-
 սիրտ տիկնայքն ու պարո-
 նայքը : Ուրեմն մնա՛ք բա-
 րեաւ :

Ա. Բենիդ . — Գնան բարեաւ :

Լոսիկ . — Երկար ժամա-
 նակէ ՚ի վեր կերպարանքդ
 տխուր երեւոյթ մը ունի,
 որուն պատճառը գուշու-
 կել անկարող գտնուեցայ
 ցարդ, յիրաւի շատ ան-
 գամ գաղտնի հետազօտու-
 թիւններ ըրի, այլ տեղե-

կութիւն մը ստանալ չը
 յաջողեցայ. իսկ այսօր գը-
 րեթէ սոյն տեղս ձեր հետ
 առանձին գտնուելու բա-
 րեբաղդութիւնը ունեցայ,
 վստահ եմ որ ձեր մտքին
 յուզման պատճառն ալ
 իմոնալու պատիւը պիտի
 ունենամ:

Սահականոյշ. — Այո՛, ինչ
 պէս որ կը կարծէք՝ ճիշտ
 է. ես ալ զգացած եմ որ
 մտքիս յուզմունքը կերպա-
 րանայս վըայ տրամու-
 թեամբ եւ միանգամայն
 տխրութեամբ մեծ փոփո-
 խութիւն մը բրած է. սա-
 կայն ի՛նչ ընեմ որ սոյն վը-
 ճակիս մէջ ինձ համակեր-

պող ընկեր մը չունիմ. կը
 տրամիմ, ինձ տրամակկց
 չունիմ. կը ցաւիմ, ցաւա-
 կկց չընիմ. և երբ շատ
 անգամ մտրդկային ընկե-
 րութիւններէն և իմ իսկ
 հասակակիցներէս իմ ներ-
 կայ վըճակիս դիւրութիւն
 մը գտնելէ կը վհատիմ, ա-
 ռանձին տեղեր քաշուե-
 լով, դժբաղդութեանս վը-
 րայ կ'ողբամ: Վերջապէս
 չերկարեմ իմ խօսքս, դուք
 իմ տրամութեանս առիթը
 հետազօտեցիք, ահա բա-
 ցատրեմ ձեզ. կ'ողբամ այն
 օրը, այն վայրկեանը, որուն
 մէջ իմ լսելըս դպրոց բա-
 ուր լսեցին, և իմ թոթով

լեղուս վարժատունն բառը
արտասանեց :

Լոսի . — Ո՛հ օրիորդ ,
այդ դադափարդ ի՛նչ այ-
լանդակ մտքի արդիւնք է .
միթէ մարդ կարո՞ղ է իւր
երջանկանալու օրը անի-
ծել , կամ իւր երջանկու-
թեան անունը արհամար-
հել : Արդարեւ կը զարմա-
նամ :

Սահականոյ . — Եւ արդ իսկ
է տրամուլթեանս առար-
կայն . երջանկութիւն եւ
թշուառութիւն , որոց նը-
շանակութիւնն ալ շփոթ-
ուած է դաս մը կարճամիտ
մարդերէ : Երջանկութիւնը
որ բարիին վայելչութիւնը

կընշանակէ , իւր բուն սահ-
մանէն հեռայնելով , իբրև
թշուառութիւն մեզ խոր-
շիկ կը ստիպեն մեր ծնող-
քը , եւ թշուառութիւնը
որ բարութեանց վայելչու-
թիւններէն զուրկ ըլլալ
կընշանակէ , իբրեւ երջան-
կութիւն մեզ ընդունիլ
կրատիպեն : Արդ՝ այսքան
ազէտները տեսնելովս չը-
տրտմիմ , չը տխրիմ , չ՝ող-
բամ : Հիմայ քեզ հարցը-
նեմ , դարոցին մէջ դալ
նատելովդ՝ ի՛նչ վայելչու-
թիւն կամ բերկրանք կը
զգաս , եթէ աշխատու-
թիւնը երջանկութիւն է ,
մեր տուներու մէջ ալ կա-

բող եմք աշխատիլ, իսկ եւ
 թէ գիրք կարդալու մէջ է
 երջանկու թիւնը, արդէն
 կարծեմ ձեր խիղճն ալ կը
 վկայէ որ մեր առններու
 մէջ եղած խօսակցութիւն-
 ները ընկեր ընկերի հետ
 ըրած ուրախութիւնները
 և զուարճութիւնները ա-
 ւելի երջանկութիւն կը հա-
 մարուին քան թէ կարդալը
 և գրելը, և ի՞նչ մարդ որ
 ընականասպէս այնչափ վեհ
 զգացմանց աէր է, իւր եր-
 ջանկութիւնը մեռեալ տա-
 ուերուն և գծերուն մէջ
 փնտռելու չէ, որ առանց
 մեր լեզուին միշտ անբար-
 բառ են:

Լուսիլ. - Կը սխալէք, օ-
 բնորդ, որչափ որ իմ կարո-
 ղութիւնս չը զօրեր, եր-
 ջանկութիւնը ձեզ բա-
 ցատրել, սակայն երջան-
 կութիւն կարծածդ ալ եր-
 ջանկութիւն չըլալուն կը
 վկայեմ, վասն զի այն խօ-
 սակցութիւնները, ընկեր
 ընկերի հետ ըրած ուրա-
 խութիւնները եւ զուար-
 ճութիւնները, զորս եր-
 ջանկութիւն կ'անուանէք,
 ոչ միայն անցաւոր են, և
 մեր մանկական հասակին
 հետ ոչընչութեան մէջ կը
 գլորին կ'իյնան, այլ նաև
 շատ անգամ մեր կենաց
 առջեւը թշուառութեան

անդունդներ կը բանան ,
անդունդներ , որք յաւի-
տենական գերեզմաններ
են մարդուն համար :

Արտիսի . — Օրիորդք , որ
չափ որ ձեր խօսակցութիւ-
նը առանձին էր , դէպքը
այնպէս յաջողեց , որ ես ալ
մասն ունենամ անոր մէջ ,
լսեցի որ մարդուն երջան-
կութեան և թշուառու-
թեան վրայ էր ձեր խօսքը ,
որուն օրինաւոր որոշում
մը տալ որչափ որ ձեր դե-
ռափթիթ հասակի կարու-
ղութենէն վեր է , բայց և
այնպէս կը դուլեմ ձեր սրբ-
տին եռանդը . երկուքդ ալ
երջանկութիւն կը փնտուէք

եւ թշուառութենէն կը
խորշիք , ուրեմն բաւակա-
նին չափ բարին ընդունե-
լու և չարէն հեռանալու
ախորժ ունիք . բայց որով
հետեւ բարին չարէն ընտ-
րելուն մէջ կը տկարանաք ,
ուստի լսեցէք որ ձեր սրբ-
տին եռանդը կատարելա-
գործեմ , ընտրելոյն եղա-
նակը ձեզ ուսուցանելով :
Մենք մեր կենաց շրջանին
մէջ ինչ որ կրնենք , այն ա-
մենը ընտրութիւնն է . այս
ընտրութիւնները , որչափ
որ կարեւոր ըլլան , այնչափ
ալ անխորհուրդ կը հա-
մարուին , ըստ որում կա-
րեւոր միայն զանոնք կը

համարենք, ինչ որ մեզ
 գեղեցիկ կ'երեւին. միշտ
 մեծամեծ վտանգներ մեր
 կենաց ճանապարհին մէջ
 մեղ կը սպասեն զմեզ ան-
 խուսափելի որոգայթնե-
 րու մէջ ձգելու. ամեն կող-
 մէն ներհակ դիպուածներ,
 կերպարանեալ առաքինու-
 թիւնները մեր կենաց կեդ-
 րոնը ձգուելով, մեր հո-
 գւոյն բարեմասնութեան
 կարգերը վեր ՚ի վայր կը
 շրջեն, այն բարեմասնու-
 թիւնները, որոնցմով եր-
 ջանիկ ըլլալ կը յուսայինք:
 Այլ Աստուած որ ՚ի բնէ
 մարգասէր է և միշտ մար-
 դուն յաւիտենական բա

բեաց վրայօք միայն կը հո-
 գայ, սոյն բաղմալրէսլ ճա-
 նապարհին մէջ մեզ ուղե-
 կից սուաւ իւր իմաստու-
 թիւնը որ բոլոր բարու-
 թեանց վեհագոյնն է, ինչ
 սէս որ չարեաց մեծագոյնն
 սլ սոխտութիւնն է:

Իմաստութիւնն է լու-
 սաւոր բան, որ ճշմարիտ
 ու արդար բաները՝ սուտ
 ու խաբուսիկ բաներէն
 զատելով, անոնց օգտակար
 եւ սխաանի ըլլալին մեզ
 կը ցուցնէ: Իմաստութիւ-
 նը կը հաստատէ մեր մըտ-
 քի դատումը և սահման
 կը դնէ մեր ստահակ կամ-
 քին: Սոյն սրայծառ և յըս-

տակ իմանալի լուսոյն միջ-
նորդութեամբ մարդն կը
գիմէ գէպ ՚ի արդարու-
թիւն, խելամուտ ըլլալով,
որ բարի է օրինաց հնա-
զանգիլը . օրինաց հնազան-
դիւն է առաքինութիւն ,
զոր իւր մասնաւոր ճիւղե-
րուն վերածելով , հարկ է
ըսել , որ և է մէկումը ա-
նիրաւութիւն չընել , աչ
խատասէր բաւականասէր
և ժուժկալ ըլլալ . սրով-
հետեւ իմաստութիւնը իր
գերբնական լուսով կը տես-
նէ որ դատարկութեան ,
չուսյտութեան և զեղխու-
թեան կը հետեւին տգի-
տութիւն և կորուստ մար-

մնաւոր առողջութեան ,
գոյքի և պատուոյ անա-
պահովութիւն : Երբ մարդ
մը իւր կեանքը այսպէս ի-
մաստութեան առաջնոր-
դութեամբ առաքինու-
թեան ճանապարհին մէջ
ըստ օրինի կարգաւորեալ
է , ամեն առաքինութիւնք
անոր կը հետեւին :

Ուրեմն պիտի համոզ-
ուիք , որ ամեն առաքի-
նութիւնները , սրոնք եր-
ջանկութեան պատճառ են ,
գիտութիւն են , որք կը
բաղմանան և կ'արդիւնա-
ւորին կանոնաւոր խորհրդ
դաժութեամբ : Արդ՝ երբ
մենք կ'ուղենք մեր միտքք

քու սաւորել, մեր դատու-
 մը ուղղել եւ մեր կամքն
 ու սիրտը օրինաց հպա-
 տակել, հարկ կ'ըլլայ գի-
 տութիւն ուսանիլ, և գի-
 տութիւն սորվելու համար
 մեր դիմելու ենք և որո՞ւն
 ապաւինելու ենք, եթէ ոչ
 գպրոցի եւ սւսուցչաց :
 Սահականոյշ, գպրոց անու-
 նը, որ քեզ զգուանք կը
 բերէ, իմ սրտիս ուրախու-
 թիւնը կը կրկնապատկէ :
 Գասապիւբքիդ էջերը, ո-
 ընք քեզ համար գերու-
 թեան շղթաներ են, իսկ
 ես և ամեն ուսանողք զա-
 նոնք ոսկի մանեակներ կը
 համարենք և անթառամ

ծաղկեայ սպակներ : Վասն
 զի անոնց մէջ գտնուած
 բարի և վսեմ օրինակները,
 առաքինութեան առաջ-
 նորդ կ'ընդունիմք և չա-
 բերէն խորշելու միջոց :

Ուրեմն, օրիորդ, դըս-
 րոցը կուտայ մեզ Աստու-
 ծոյ իմաստութիւնն ու շը-
 նորհքը, դպրոցը կ'առաջ-
 նորդէ մեզ առաքինու-
 թեան ճանապարհով ըն-
 թանալ և երջանկութեան
 հասնել եւ զայն վայելել
 յաւիտեան : Իսկ ձեր յի-
 շած ուրախութիւններն ու
 զուարճաբանութիւնները,
 որոնք սիրտդ ու միտքդ
 գրաւեր են, լոկ զեղխու-

Թիւններ, շուայտու թիւններ և մարդուս կենաց մէջ պատահած վտանգներ են և կորստեան որոգայթներ, որոնք տգիտութենէն յառաջ գալով, մարդուն բարեմասնութիւնները մերկացունել կը ճգնին միշտ: Այո՛, կը մերկացունեն ըզքեզ բոլոր բարեմասնութիւններէդ, առաքինութիւններէդ, եւ կը զրկենքեզ համար պատրաստուած երջանկութենէդ, եթէ զանոնք թողլով իմաստութեան չ'ապաւինինք:

Ո՛հ, չըգիտեմ թէ սոյն գիսրուածով մը երգուած երգին ո՞ր մասը կամ յառ-

կութիւնը գովեմ որ բոլորովին գովութեան է արժանաւոր: Լսեցիք անոր ցանկալի եղանակը և գեղեցիկ իմաստը (*). արդեօք անմոռանալի յիշատակ մը և անզրաւ ուրախութիւն մը չարթընցո՞ւց ձեր սրտին մէջ ալ, ինչ որ արդէն իմ սրտիս մէջ կը զգամ. դրսւրոցական երգ մի է այս, որուն մէջ յայտնի կը լիայլի բարեյիշատակ հեղինակին հոգւոյն վեհութիւնն ու հայրենասիրութիւնը. յերաւի լսողին սիրտը հայ-

(*) Այս տեղ երգ երգուած է:

րենասիրութիւն յիշատակներով կը լեցունէ, և դէպ ՚ի երկինք կը վերցնէ, թարմատար կիրքերը կը շնչուցանէ, եւ մինչ մարդու սրտին խորը ազդերով՝ ազնուագոյն իմաստներ կը զարթուցանէ, որով մարդուս փառքն ու սլափւը կ'անմահացնէ, և քաղաքաժողով ընկերութիւններու օգուտներ կը մատակարարէ : Արական սեռի սրտերու մէջ անյողդողդ արիութիւն կը անկէ, և իգական սեռին սրտերուն մէջ հայրենասիրութիւն եւ շնորհասպարտ գոհութիւն կը բուսցընէ :

Օրինորդ, դպրոց գնալու օգտակարութեան վրայ այս չափ խօսելէս յետոյ, ալ չեմ տարակուսիր ձեր համազուամն ու հուանութիւնը ստանալու :

Սակականոյշ. — Սրդէն թէ ձեր համոզիչ խօսքերէն, թէ դիպուածով մը երգուած երգին ազդեցութենէն սիրտըս լցուած, դպրոց վաղելու և գիրք կարդալու եռանդը կը փռի զգացմանըս մէջ, ուստի գոհ եմ եւ միանգամայն շնորհասպարտ, թէ ձեր եռանդուն խօսքերուն մասին, և թէ Լուսիկի այցելութեան, որ իմ այսուհե-

տեւ դէպ ՚ի առաքինու-
թիւն գիմեղուս պատճառ-
եղսք :



2013

0015770

2013

2001

ՀՀ Ազգային գրադարան



NL0151475

ՀՀ Ազգային գրադարան



NL0015170

